



FINCA®

«Բժշկական ապահովագրություն մատուցող ընկերության ընտրության բաց մրցույթ»

Մրցույթի անվանում՝ Բժշկական ապահովագրություն մատուցող ընկերության ընտրության բաց մրցույթ,

Հայտերն ընդունելու սկզբնաժամկետ՝ 29 դեկտեմբեր 2020թ.

Հայտերն ընդունելու վերջնաժամկետ՝ 29 հունվար 2021թ.

Մրցույթի հայտերն ամփոփելու նիստի օրը՝ 4 փետրվար 2021թ 12:00:

Ծածկագիր՝ 20/003

Ապահովագրության նկարագիր՝

Ապահովագրվող անձանց քանակը՝ մինչև 400:

1. ՇՏԱՊ ԵՎ ԱՆՀԵՏԱԶԳԵԼԻ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ
2. ԱՐՏԱՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ (ԱՄԲՈՒԼԱՏՈՐ) ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅԱՆ՝ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ
 - 2.1. Բժիշկ-մասնագետների խորհրդատվություններ,
 - 2.2. Լաբորատոր ախտորոշում,
 - 2.3. Գործիքային ախտորոշում,
 - 2.4. Ամբուլատոր պայմաններում բժշկական միջամտությունների իրականացում,
 - 2.5. Հիվանդանոցային պայմաններ չչափանցող անհետաձգելի թերապևտիկ հիվանդությունների կամ վիրաբուժական հիվանդությունների ոչ վիրահատական բուժում,
 - 2.6. Հիվանդանոցային պայմաններ չչափանցող պլանային կամ անհետաձգելի վիրահատական միջամտություններ,
 - 2.7. Վնասվածքների (կտրվածքներ, հոդախախտեր, փափուկ հյուսվածքների սալջարդ, վերքեր և այլն) բուժում,
 - 2.8. Այրվածքների, ցրտահարությունների, էլեկտրահարությունների բուժում,
 - 2.9. Ինֆեկցիոն հիվանդությունների բուժում,
 - 2.10. Սուր թունավորումների ամբուլատոր բուժում,
 - 2.11. Պատվաստումներ, որոնք անհրաժեշտ են արտասահման մեկնելու համար,
 - 2.12. Ամբուլատոր պայմաններում նշանակված դեղամիջոցների արժեքի հատուցում,
 - 2.13. Բժշկական պարագաներ՝ ներարկիչներ, ներերակային կաթիլային համակարգ, բինտ, բամբակ (արտահիվանդանոցային պայմաններում նշանակված),
 - 2.14. Բժշկի տնային կանչ Երևան քաղաքում (Ապահովագրողի կողմից նշված ամբուլատոր բուժկենտրոնից),



2.15. Տնային պայմաններում անալիզների և այլ լաբորատոր գործիքային հետազոտությունների կազմակերպում, երբ նման ծառայության մատուցման անհրաժեշտությունն առաջանում է Ապահովագրված անձի առողջական խնդիրների պատճառով բուժհաստատություն դիմելու անհնարինության դեպքում:

3. ՆԵՐՇԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ (ՍՏՍՑԻՈՆԱՐ) ԲՈՒԺՈՒՄ՝ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ

- 3.1. Անհետաձգելի թերապևտիկ կամ վիրաբուժական հիվանդությունների ոչ վիրահատական բուժում հիվանդանոցային պայմաններում,
- 3.2. Վիրահատական բուժում,
- 3.3. Ներհիվանդանոցային բուժման ընթացքում բժշկի նշանակմամբ և գրավոր հիմնավորմամբ իրականացվող լաբորատոր և/կամ գործիքային ախտորոշիչ հետազոտություններ,
- 3.4. Ինֆեկցիոն հիվանդությունների բուժում,
- 3.5. Վնասվածքների (կտրվածքներ, հոդախախտեր, վերքեր, սալջարդեր, պոլիտրավմաներ) բուժում,
- 3.6. Այրվածքների, ցրտահարությունների, էլեկտրահարությունների բուժում,
- 3.7. Սուր թունավորումների բուժում,
- 3.8. Ինտենսիվ թերապիա և ռեանիմացիոն միջոցառումներ պահանջող անհետաձգելի վիճակների բուժում (որոնք չեն ներառվում պետպատվերի շրջանակներում¹),
- 3.9. Վնասվածքների վիրահատությունների ժամանակ կիրառվող մետաղական կոնստրուկցիաներ,
- 3.10. Ստացիոնար պայմաններում նշանակված դեղամիջոցների արժեքի հատուցում,
- 3.11. Բժշկական պարագաներ՝ ներարկիչներ, ներերակային կաթիլային համակարգ, բինտ, բամբակ (ներհիվանդանոցային):
- 3.12. Քթի միջնապատի դեֆորմացիայի, քթային անցուղիների, հարքթային խոռոչների վիրահատական բուժում,
- 3.13. Հիվանդասենյակի արժեքի հատուցում:

4. ՖԻԶԻՈԹԵՐԱՊԻԱ

- 4.1. Էլեկտրոթերապիա՝ Էլեկտրոֆորեզ, ֆոնոֆորեզ, գերձայնային հաճախականության ալիքներով թերապիա, ամպլիպուլս թերապիա, ուլտրամանուշակագույն ճառագայթում՝ սույն կետում թվարկած բոլոր ծառայությունների մասով համախառն 1 կուրս՝ 15 սեանս Պայմանագրի գործողության ընթացքում,
- 4.2. Վնասվածքին հաջորդող ֆիզիոթերապևտիկ և վերականգնողական բուժում:

5. ԱԿՆԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ՝ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ

- 5.1. Ակնաբուժական հիվանդությունների վիրահատական բուժում,
- 5.2. Ակնաբուժական հիվանդությունների թերապևտիկ կամ վիրաբուժական հիվանդությունների ոչ վիրահատական բուժում
- 5.3. Օպտիկական լինզաների, ապակիների և շրջանակների ձեռքբերման ծախսերի հատուցում տեսողության փոփոխության դեպքում:


6. ՍՏՈՍՏԱՆՈՒՈՒՄ՝ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ





- 6.1. Ստոմատոլոգիական ծածկույթը՝ համաձայն 6.3 կետում նշված Ստոմատոլոգիական ծառայությունների ցանկ,
- 6.2. Սույն ծրագրով հատուցվում է յուրաքանչյուր Ապահովագրված անձի համար՝
 - Թերապևտիկ բուժման ցանկացած ատամի ծախս
 - Վիրաբուժական բուժման ցանկացած ատամի ծախս (առանց ատամների քանակի սահմանափակման)
 - Ատամնանստվածքների հեռացում, փայլեցում երկու անգամ
 - Ատամնաբուժական օրթոպեդիա
- 6.3. Ստոմատոլոգիական ծառայությունների հատուցման ցանկ.

Ծառայություն
Ռենտգեն (հատուցվող դեպքերի պարագայում)
Թերապիա
Ատամի պսակի վերականգնում
<ul style="list-style-type: none"> ✓ Պարզ ✓ միջին ✓ բարդ
Էնդոդոնտիա
<ul style="list-style-type: none"> ✓ մեկ արմատանի ատամ ✓ երկու արմատանի ատամ ✓ երեք արմատանի ատամ ✓ արմատների վերաբուժում
Պերիոդոնտիտի բուժում և կանխարգելում (տարեկան երկու անգամ)
<i>ատամնանստվածքների հեռացում, փայլեցում (այդ թվում Air-Flow)</i>
Վիրաբուժություն
<ul style="list-style-type: none"> ✓ ատամի պարզ հեռացում ✓ ատամի բարդ հեռացում ✓ իմաստության ատամի հեռացում ✓ ռետենցված ատամի հեռացում ✓ ապեքսեկտոմիա ✓ թարախակույտի բացահատում
Ստոմատոլոգիական օրթոպեդիա (սահմանաչափի մեջ ներառել նաև օրթոպեդիկ պրոթեզավորմանը նախորդող նույն ատամների թերապևտիկ կամ վիրաբուժական բուժման ծախսերը)





7. ՀՂԻՌԻԹՅՈՒՆ ԵՎ ԾՆՆՂՕԳՆՈՒԹՅՈՒՆ

- 7.1. Պետական պատվերի շրջանակներից դուրս բնականոն, ախտաբանական հղիության վարման ծախսերի հատուցում (ստացիոնար և/կամ ամբուլատոր դեպքերում),
- 7.2. Պետական պատվերի շրջանակներից դուրս ծննդալուծման (այդ թվում կեսարյան հատում) ծախսերի հատուցում, (9 ամսվա սպասման ժամկետ):

8. ՕՆԿՈԼՈԳԻԱ՝ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ

- 8.1. Չարորակ նորագոյացությունների վիրաբուժություն,
- 8.2. Չարորակ նորագոյացությունների ոչ վիրաբուժական բուժում՝ քիմիոթերապիա, ճառագայթային բուժում՝ 1 կուրս:

9. ՍՐՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ՝ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ

- 9.1. Սրտանոթային վիրաբուժություն (բաց եղանակով),
- 9.2. Սրտանոթային վիրաբուժություն (փակ՝ ներանոթային եղանակով),
- 9.3. 9 կետում և դրա ենթակետերում թվարկված դեպքերը հատուցվեն են, եթե դրանք ներառված չեն ՀՀ ԱՆ «Կյանքի Ստենտ» ծրագրում:

10. ՆԵՅՐՈՎԻՐԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ՝ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ

- 10.1. Նեյրովիրաբուժական վիրահատություններ (բաց եղանակով),
- 10.2. Նեյրովիրաբուժական վիրահատություններ՝ փակ ներանոթային եղանակով:

11. ՔՐՈՆԻԿ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ

- 11.1. Քրոնիկ հիվանդությունների սրացումների բուժում,
- 11.2. Վիրահատական միջամտություններ, որոնք հանգեցնում են հիվանդության կամ վիճակի լիարժեք ապաքինմանը,

12. ՏԱՐԵԿԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ԲՈՒԺՋՆՆՈՒՄ՝ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ.

- 12.1. Տարեկան կանխարգելիչ բուժզննումն իրականացվում է Պայմանագրի գործողության ընթացքում մեկ անգամ հետևյալ ծավալով՝

Բժիշկ-մասնագետների խորհրդատվություններ՝


- ✓ Թերապևտ (մանկաբույժ)
- ✓ Ակնաբույժ (ներառյալ տեսողության սրության որոշում)
- ✓ Ստոմատոլոգ
- ✓ Գինեկոլոգ

Լաբորատոր հետազոտություններ՝

- ✓ Արյան ընդհանուր քննություն լեյկոբանաձևով
- ✓ Մեզի ընդհանուր քննություն
- ✓ Շաքարի որոշումն արյան մեջ
- ✓ Լիպիդային պրոֆիլ (ընդհանուր խոլեստերին, բարձր խտության լիպոպրոտեիդներ, ցածր խտության լիպոպրոտեիդներ, եռլիցերիդներ)
- ✓ PAP քսուք
 - ✓ PSA թեստ 45 տարեկանից բարձր տղամարդկանց համար

Գործիքային հետազոտություններ՝

- ✓ Էլեկտրասրտագրություն
- ✓ Որովայնի խոռոչի և փոքր կոնքի օրգանների ուլտրաձայնային հետազոտություն
- ✓ Կրծքագեղձի և վահանաձև գեղձի ուլտրաձայնային հետազոտություն:





12.2. Տարեկան կանխարգելիչ բուժզննումները իրականացնելու համար լրացնել հենակետային բժշկական ապահովագրության ցանկ՝ Երևանում և ՀՀ մարզերում:

1	
2	
..	
N	

*** Լրացուցիչ առավելություն՝ Սոցիալական այլընտրանքային փաթեթի հնարավորություն,**

- Ուսման վարձի փոխհատուցում
- Ֆիթնես ակումբի/ լողավազանի ծախսի փոխհատուցում

Վերը նշված բոլոր կետերում նվազագույն պահանջներից բացի այլ ծառայությունները առաջարկվելու դեպքում կդիտարկվեն որպես լրացուցիչ առավելություն:





Մրցույթին դիմելու ընթացակարգ՝

Բաց մրցույթին մասնակցելու պայմանները և անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, առաջարկի պայմանները (այսուհետ՝ Գնառաջարկ), ինչպես նաև այլ մանրամասները ներկայացված են ստորև:

- Հայտատուն ինքնուրույն է հոգում Գնառաջարկի պատրաստման և բաց մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի (միասին այսուհետ՝ Մասնակցության հայտ) ներկայացման ծախսերը, իսկ Կազմակերպիչը որևէ պատասխանատվություն և պարտավորություն չի կրում այդ ծախսերի համար՝ անկախ մրցույթի ընթացքից և արդյունքներից:
- Կազմակերպիչն իրավունք ունի մերժել Մասնակցության հայտը, եթե Հայտատուն ուղղակի կամ անուղղակի կերպով խախտել է Կազմակերպչի կողմից սահմանված պայմանները:
- Գնառաջարկը բնօրինակի և կրկնօրինակի հետ միասին («Բնօրինակ» և «Պատճեն» նշումներով) փակ և կնքված առանձին ծրարներով պետք է հասցեագրվի.

«ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ


ՀՀ, ք. Երևան, 0023, Ագաթանգեղոսի 2ա

Հեռ. +37412 555-555

- Ծրարների վրա պետք է նշված լինի կազմակերպության անվանումը, իրավաբանական և գործունեության հասցեները, հեռախոսահամարը, էլ. փոստը, դեկավարի անունը, պաշտոնը, մրցույթի անունը և կոդը: Գնառաջարկը պետք է ներկայացնել «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ հասցեով ոչ ուշ, քան. 2021թ. հունվարի 29-ը ժամը 17:00 (Երևանի ժամանակով):
- Գնառաջարկը պետք է ներկայացվի ՀՀ դրամով՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը ներառյալ: Առաջարկը պետք է պարունակի յուրաքանչյուր ծառայության փոխհատուցման սահմանաչափը՝ ՀՀ դրամով:
- Գները պետք է լինեն վերջնական ամրագրված և ինչպես մինչև պայմանագրի կնքումը, այնպես էլ պայմանագրի գործողության ընթացքում ենթակա չլինեն փոփոխման, եթե այլ բան չնախատեսվի պայմանագրով:
- Գնառաջարկը լրացնելիս Հայտատուին իրավունք է վերապահվում լրացնել/մանրամասնել գնառաջարկի ցանկացած կետ/դրույթ՝ թողնելով անփոփոխ պահանջվող ապրանքների և ծառայությունների բովանդակությունը:

- Հայտատուն պարտավոր է լրացնել
 - Մատուցվող ապահովագրական ծառայությունների ցանկը
 - Հենակետային բժշկական ապահովագրության ցանկ

- Հայտատուն կարող է ներկայացնել միայն մեկ գնառաջարկ՝ համաձայն Հայտարարությունում նշված Ծառայությունների ցանկի:
- Մրցույթի մեկնարկային գին և նախավճար չի սահմանվում:
- Սույն մրցույթի Հայտարարությամբ նշված վերջնաժամկետից ուշ ներկայացված գնառաջարկները կմերժվեն:





- Հայտատուները մրցույթի ամփոփման և արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը կստանան մրցույթի հայտերի ամփոփումից հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում:


Պարտադիր պայմաններ.

- Հայտատուն պետք է ունենա
 - առնվազն 3 տարվա գործունեություն
 - Առնվազն՝ 5 կազմակերպության (300 և ավելի աշխատակից ունեցող) հետ համագործակցության փորձ
 - Բանկային, ֆինանսական կամ միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության փորձը ցանկալի է
- Կազմակերպչի հետ փոխկապակցված Հայտատուների մասնակցությունն արգելվում է,
- Հայտերը, որոնք կհամարվեն ըստ էության մրցույթի պայմաններին համապատասխանող, կգնահատվեն ըստ առաջարկում ներկայացված պայմանների:
- Գնահատումը կկատարվի ըստ ներկայացված տեխնիկական և գնային առաջարկների:
- Տեխնիկական առաջարկն իր մեջ ներառում է կազմակերպության փորձ, շուկայում զբաղեցրած դիրք և այլն,
- մրցույթի հաղթողի հետ կնքվում է պայմանագիր մեկ տարի ժամկետով՝ մրցույթի ավարտից և ամփոփումից հետո՝ 10 օրվա ընթացքում,
- լրացուցիչ տեղեկությունների, ինչպես նաև մրցույթի մանրամասներին ծանոթանալու համար դիմել հետևյալ հասցեով՝ Anush.samvelyan@finca.am
-

ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերն են՝

1. Գնառաջարկ,
2. Պետական գրանցման վկայականի պատճեն իր ներդիրներով՝ կնքված կազմակերպության կնիքով,
3. Տվյալներ կազմակերպության վավերապայմանների մասին (կցված է),
4. Տնօրենի անձնագրի պատճեն,
5. Հայտարարագիր այն մասին, որ տրամադրված տվյալները ճիշտ և ամբողջական են ու համապատասխանում են իրականությանը (կցված է),
6. Գործընկեր կազմակերպությունների ցանկ, որոնց հայտատուն տրամադրել է նույնատիպ ապրանքներ/ծառայություններ,
7. Ամփոփ տեղեկություններ կազմակերպությանը շնորհված վկայականների, լիցենզիաների և այլ հիմնավորող փաստաթղթերի վերաբերյալ (առկայության դեպքում),
8. Տվյալներ կազմակերպության վավերապայմանների մասին





ԲՈՒՈՐ ԴԱՇՏԵՐԸ ԼՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՐՏԱԴԻՐ ԵՆ

Ում՝ «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ

Ումից՝ _____

(կազմակերպության անունը)

Ամսաթիվ՝ _____ / _____ / 20--թ.

1. Կազմակերպության լրիվ անվանումը՝

2. Կազմակերպության ղեկավարի պաշտոնը և անուն, ազգանունը(պայմանագիրը ստորագրող)՝

3. Կազմակերպության իրավաբանական և ֆիզիկական հասցեները (եթե տարբերվում են)՝

Գործունեության հասցե՝

Իրավաբանական հասցե՝

4. Կազմակերպության բանկային տվյալները՝

Բանկի լրիվ անունը.

Բանկային հաշվի համարը՝

--	--	--	--	--	--	--	--	--	--	--	--	--	--	--	--	--	--	--	--

5. Կազմակերպության ՀՎՀՀ՝

--	--	--	--	--	--	--	--	--	--	--	--	--	--	--	--	--	--	--	--

6. Հարկատեսակը՝ _____


7. Հեռախոսահամարներ՝


Ֆիքսված _____ Բջջային _____

8. Էլ-փոստ. _____

Ստորագրված և կնքված է՝

(անուն, ազգանուն, պաշտոն)







ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

ՍՈՒՑԸ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՅՄԱՆ Է

Մոյնով հայտարարում և հավաստում եմ հետևյալը.

1. Ես՝ _____ ա, _____ և _____

(ընկերության/ կազմակերպության լրիվ անվանումը՝ ըստ պետական գրանցման վկայականի)

(այսուհետ՝ Կազմակերպություն), որի ղեկավարն եմ հանդիսանում, սնանկ չենք, սնանկության, լուծարման կամ վերակազմակերպման գործընթացում չենք գտնվում, իմ և Կազմակերպության գույքը ծանրաբեռնված չէ այլ անձանց իրավունքներով, ձեռնարկատիրական գործունեությունը կասեցված չէ,

2. Ես և Կազմակերպությունը ընդգրկված չենք որևէ դատական գործում, ինչպես նաև դատական ակտերի հարկադիր կատարման գործընթացում, դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով մեղավոր չենք ճանաչվել պրոֆեսիոնալ գործունեության շրջանակում իրավախախտում կատարելու մեջ,

3. ստորև նշված ամսաթվի դրությամբ ես, իմ ընտանիքի անդամները և Կազմակերպությունը չունենք փաստացի և/կամ հնարավոր շահերի բախում ՖԻՆԲԱ ՈՒՎԿ ՓԲԸ-ի՝ որպես Մրցույթի կազմակերպչի հետ, ինչը կարող էր սահմանափակել Մրցույթի կազմակերպչի կողմից մրցութային հայտերի անկողմնակալ և անաչառ գնահատումը, իսկ այդպիսիք հայտնաբերելու դեպքում պարտավորվում եմ անմիջապես գրավոր ձևով տեղեկացնել Մրցույթի կազմակերպչին,

4. Ես և Կազմակերպությունը երբևէ չենք մասնակցել որևէ ահաբեկչական գործունեության, ինչպես նաև փողերի լվացման հետ կապված գործարքների, դատարանի վերջնական ուժի մեջ մտած դատավճռով մեղավոր չենք ճանաչվել խարդախություն կատարելու, կոռուպցիոն գործունեության կամ հանցավոր խմբավորման մեջ ներգրավվելու մեջ,

5. այն դեպքում, եթե տեղի կունենա վերը նշված դրույթներից որևէ մեկի հետ կապված փոփոխություն, ես պարտավորվում եմ անմիջապես գրավոր ձևով տեղեկացնել Մրցույթի կազմակերպչին:

Ամսաթիվ _____

Ստորագրված և կնքված է _____

Անուն, ազգանուն, պաշտոնը

Ստորագրություն

